



ՀՀ բնակատնային տնտեսության նախարարություն

«Հայաստան. քաղաքային ջեռուցման եւ տաք ջրամատակարարման էներգաարդյունավետության բարձրացում» ՄԱԶԾ/ԳԷՖ/00035799 Ծրագիր

Ապարան քաղաքի Բաղրամյան փողոցի թիվ 6, 10, 12, 14, 46, 19, 23, և 25 բազմաբնակարան շենքերի կենտրոնական ջեռուցման ծրագրի

ԸՆԹԱՑԻԿ ՓՈՒԼ

Ծրագրի ֆինանսական աջակցությամբ և Ապարանի քաղաքապետարանի հետ սերտ համագործակցությամբ 2008-2009թթ. ջեռուցման շրջանին գործարկվեցին Ապարան քաղաքի Բաղրամյան փողոցի թիվ 12 և 14 շենքերի կենտրոնական ջեռուցման համակարգերը: 2009թ. դեկտեմբերի սկզբին Ապարանի քաղաքապետարանի և Ծրագրի համագործակցությամբ գործարկվեց նաև Ապարան քաղաքի Բաղրամյան փողոցի թիվ 46 շենքի ջեռուցման վերակառուցված համակարգը:



2010թ. Ապարան քաղաքի Բաղրամյան փողոցի թիվ 6, 8, 10, 12, 14, 19, 23, 25 և 46 բազմաբնակարան շենքերի սեփականատերերի անունից համապատասխան համատիրությունները առաջարկություններ են ներկայացրել Ապարանի քաղաքապետարանին՝ իրենց շենքերի էներգախնայողության բարձրացմանն ուղղված միջոցառումների իրականացման հարցով: Ապարանի քաղաքապետարանը դիմեց Ծրագրին՝ հայցելով նրա աջակցությունը էներգախնայողության և էներգաարդյունավետության բարձրացմանն ուղղված միջոցառումների իրականացման գործում, որոնք ներառում են ինչպես նշված շենքերի մուտքերի վերակառուցման և մուտքի դռների ու լուսամուտների փոխարինման աշխատանքների, այնպես էլ գործող կաթսայատների գազամատակարարման համակարգի վերակառուցման աշխատանքները:

Հաշվի առնելով Ծրագրի և Ապարանի քաղաքապետարանի արդյունավետ համագործակցությունը նախորդ տարիների ընթացքում, որոշում կայացվեց աջակցել Ապարանի քաղաքապետարանին և կնքվեց Համաձայնագիր Մտադրությունների Մասին:



Ըստ համաձայնագրի Կողմերը կիսելու են իրենց պարտավորությունները Ապարան քաղաքի Բաղրամյան փողոցի թիվ 6, 8, 10, 12, 14, 19, 23, 25 և 46 բազմաբնակարան շենքերի մուտքերի վերակառուցման և մուտքի դռների ու լուսամուտների փոխարինման աշխատանքների իրականացման, ինչպես նաև գործող կաթսայատների գազամատակարարման համակարգի վերակառուցման գործում:

Բաղրամյան փողոցի թիվ 6, 8, 10, 12, 14, 19, 23, 25 և 46 բազմաբնակարան շենքերի մուտքերի վերակառուցման և մուտքի դռների ու լուսամուտների փոխարինման աշխատանքների իրականացման արդյունքում գազի ակնկալվող տնտեսումը ջեռուցման սեզոնի ընթացքում կազմելու է մոտ 17 000 խմ, որի արդյունքում ջերմոցային գազերի արտանետումների ակնկալվող կրճատումը կազմելու է մոտ 35 տ CO₂ի չափով:

Գործող կաթսայատների գազամատակարարման համակարգի վերակառուցումը հնարավորություն կտա գազի գործող սակագնային համակարգում օգտվել խոշոր (ամսական 10 000 խմ-ից ավել) սպառողների համար սահմանված սակագնից, որը մոտ 30%-ով ցածր է ամսական 10 000 խմ-ից պակաս սպառողների համար, ինչը զգալիորեն կնվազեցնի ջերմային էներգիայի ծախսերը:

Նշված աշխատանքների ավարտը նախատեսվում է մինչև 2010-2011 թթ. ջեռուցման սեզոնի սկիզբը: